Այս իրք տեւեալք ցամիսս երիս[130]՝ եղեն որպէս թուի յամարանի թագաւորութեան տարւոյն (1199), կամ ’ի միւսում ամին: Զայս արարեալ Լեւոնի՝ աճապարեաց գրել ծանուցանել զամենայն՝ Քահանայապետին Հռովմայ, առաքելով հրեշտակս եւ թուղթս եւ ընծայս արժանավայելս, որպէս խոստովանի եւ ընդունողն ’ի պատասխանւոջն՝ ճոխս եւ առատօրէն լինել. (Nos per eundem Nuntium tuum magnifice et liberaliter visitasti): Դեսպանն էր Ռոպերդ Մարկադեան՝ ’ի զարմէ տերանց Մարկադայ ամուր բերդի ’ի ծովեզեր Ասորւոց, ընդ մէջ Անտիոքայ եւ Տրիպոլեայ, զարդիս կոչեցեալ *Գալադ-էլ-Մարգապ*, եւ իբր հնգետասան ամօք յառաջ (1186) վաճառեալ Հիւանդատան ասպետաց, յայն սակս եւ Ռոպերդ մտեալ էր ’ի ծառայութիւն Լեւոնի, եւ կոչի ’ի սմանէ «հաւատարիմ եւ սիրելի զօրական իւր»[131]: Գրէր նա ’ի թղթի իւրում՝ յետ պատմելոյ մի ըստ միոջէ զեղեալսն յԱնտիոք, զաւելին լսել ’ի դեսպանէ աստի իւրմէ. աղաչելով դատ առնել եւ խափանել զանիրաւութիւն բռնաբարող կոմսին. միանգամայն եւ փութալ յօգնութիւն պաշտպանութեան երկրին Ասորւոց, մինչ չեւ իսպառ բարձեալ յուսոյ փրկութեան: Առ այսոսիկ պատասխանի առնէ Քահանայապետն յ’17 դեկտեմբեր ամսոյ, ոչ երկբայել ընդ գրեալսն, այլ օրէնս զոլ արդարութեան՝ լսել եւ հակառակ կողմանն. վասն որոյ եւ յանձնէր զխնդիրն՝ երկուց նուիրակաց իւրոց՝ քննել եւ դատել անաչառապէս. եւ աղաչէ զԼեւոն՝ մի՛ զանձնական շահ վերադասել քան զհասարակացն, որ է նիզակակցութիւնն ընդ Խաչակիրս, այլ դադարել ’ի մաքառելոյ ընդ կոմսին, մանաւանդ զի եւ հայր նորա (Պեմունդ Գ) վերահաստատեալ ’ի գահն՝ գրեալ էր առ ինքն (Պապն), պաշտպան կալ իրաւանց ժառանգութեան թոռինն:– Տուեալ էր Քահանայապետին եւ այլ թուղթ՝ ’ի նմին աւուր, խնդալով եւ խնդակցելով ընդ յօժարութիւն Լեւոնի ’ի խաչակրութիւն եւ ’ի մարտ ընդդէմ այլադենից. վասն որոյ եւ ըստ խնդրոյ դեսպանին, եւ ’ի նշանակ սիրոյն իւրոյ առաքէր ’ի ձեռն նորա զ*Նշան* կամ *Դրօշ Ս. Պետրոսի*, զի այնու ելցէ

---

130 Թուղթք Իննովկենտեայ Բ, ՄԾԲ. – **Հուրդէր. Hürter**, Histoire d'Innocent III.չկայ

131 Ոչ գիտեմ ա՞յս թուղթ էր եթէ այլ թուղթ նախ քան զայս գրեալ ’ի Լեւոնէ, զոր՝ պատմիչ ոմն ասէ մատուցեալ դեսպանաց նորին առ Քահանայապետն, մինչ գտանէր սա ’ի Բոլոնիա քաղաքի Իտալիոյ, առ որ մատեան առաքեալքն ’ի թագաւորէն Հայոց՝ ընդ դեսպանաց Պետրոսի թագաւորին Արակոնի:– **Ֆալէոնի** (Faleoni), Պատմութիւն Եկեղեցւոյն Բոլոնիոյ: